



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25.883

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ.Խ.Ս.Հ. ԿՈՌՊԵՐԱՅՐԳԻ

ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

— — — — — Ո Ր Ը — — — — —

ԺՈՂՈՎԱԾՈՒ

334(07)

Հ - 11

ՅԵՐԵՎԱՆ

1920

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոոպերացիայի միջազգային ուժը լայն ազդեցություն ունի համար կարելի է ոգտագործել Հայկոպի հրապարակությունը լույս տեսած հետևյալ գրքերը.

1. Գրեխով. — «Ինչպես հավաքել փայլավճարները».
 2. Դեմիտով. — «Գաղմակերպեցեք խանութային հանձնաժողովներ».
 3. Կոոպերատիվը առաջին քայլերը.
 4. Տիմոֆեևով. — «Ինչպես անել վր կոոպերատիվի գործերը լավանան».
 5. Պոմբուրով. — «Գյուղական սպառկոոպի վարչությունն իր հաշվետվությունն ինչպես պետք է կազմի».
 6. Ոսերովսկայա. — «Ինչու համար է պետք կոոպերացիան գեջկուհուն».
 7. Ֆինկովսով. — «Ինչ պետք է իմանալ ընկերությունն կանոնադրությունից».
 8. «Դեպի կոոպերացիա». — Հրահանգների ժողովածու կանանց կոոպերացիան մասին:
 9. Պ. Փոլյանի «Գյուղացի ուժեղացում կոոպերացիան».
 10. Պ. Փոլյանի. — «Կորչեն չարչիները».
- Բեմադրություն համար կարելի է ոգտագործել —
1. Ալովի «Խափանվիր» պիեսը
 2. «Վոչինների դեմ կովելու միջոցը» պիեսը

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՈՐԸ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Յեթե արտասահմանում կոույերա-
տիվ ֆրոնտն ամբողջովին պետք է
յենթակա լինի բանվոր դասակարգի
դիկտատուրայի համար մղվող պայ-
քարի խնդիրներին, ապա „այնտեղ,
վորտեղ իշխանությունն արդեն գրավ-
ված է, հեղափոխական կոույերացիան
աշխատավորներին պետք է ոգնի սո-
ցիալիստական շինարարության գոր-
ծում“ (Կոմինտերնի III կոնգրեսի վերջումներից)։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐՎԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Խորհրդային Միության կոոպերացիան, վոր մասում է Ալյանսի (Կոոպերատիվների Միջազգային Միության) մեջ, արդեն չորրորդ տարին է, վոր հանդիսավոր կերպով տոնում է կոոպերա-
ցիայի Միջազգային Որը՝ համարելով այն թե կոոպերատիվ գա-
ղափարների պրոպագանդայի որ և թե կոոպերացիայի նվա-
ճումների ու անելիքների հաշվառման և նրանց ցուցադրման որ։

Կոոպերացիայի միջազգային որվա առաջիկա տոնակատա-
րության համար առաջարկվում է ղեկավարվել հետևյալ հրահան-
գներով։

1. Գովառային ու գովառակային բոլոր կենտրոններում
կազմակերպվելու յեն Կոոպերացիայի Միջազգային Որվա տոնա-
կատարության հանձնաժողովներ։

2. Այդ հանձնաժողովների կազմի մեջ մտնելու յեն կոոպերա-
ցիայի բոլոր տեսակների ներկայացուցիչները, արհմիության, գավ-
կոմի ագիտ-բաժնի, ԼԿՅԵՄ-ի, Բան.—գեղջ. բաժնի, Կարմիր
բանակի և քաղաքականության ներկայացուցիչները։

3. Հանձնաժողովի պարտականությունն է՝

ա) Տվյալ շրջանի համար մշակել տոնակատարության ման-
րամասն ծրագիրը, ղեկավարվելով ստորև բերված առաջարկներով։

բ) Աշխատանքները բաշխել տեղական ընկերների միջև։

գ) Հաշվեհառման յենթարկել կատարված աշխատանքը և ղե-
կուցում ներկայացնել կենտրոնական հանձնաժողովին։

ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԱՆԵԼ ՏԵՂԵՐՈՒՄ

Նախկին փորձի հիման վրա՝ կոոպերացիայի միջազգային
որվա տոնակատարության համար առաջարկվում է հետևյալը։

1. Հրավիրել կոոպերատիվների վարչությունների ու տե-
ղական բոլոր հասարակական, կուսակցական և պրոֆմիությունա-

կան կազմակերպությունների գոնբաց հաճախավոր ճիւղ, հետևյալ որակարգով. ա) Զեկուցում կոոպերացիայի միջազգային որվա մասին, բ) Զեկուցում կոոպերացիայի նվաճումների մասին, գ) Վոլջոյնի խոսքեր, դ) Համապատասխան համերգային ու թատերական բաժին:

2. Հրավիրել առանձին կոոպերատիվ կազմակերպությունների բնգհանուր գոնբաց ժողովներ, հետևյալ որակարգով. ա) կոոպերացիայի միջազգային որվա նշանակությունը, բ) Վարչության ինֆորմացիոն զեկուցումը, գ) Հարց ու պատասխան կոոպերացիայի գործունեության շուրջը և այլն:

3. Կոոպերատիվներին կից անհրաժեշտ է կազմակերպել չքավորների կոոպերացման ֆոնդ. ա) կոոպերատիվի ոգուտից արվող հատկացումներից, բ) փոխադարձ ոգնություն կոմիտեների հատկացումներից և գ) դանազան այլ հնարավոր աղբյուրներից:

4. Պետք է կազմակերպել չքավորներին, կարմիր բանակայինների ընտանիքների և առհասարակ կանանց կոոպերացում—բացադրելով նրանց համար ստեղծված անդամագրման արտոնությունները:

5. Կազմակերպել հատուկ վաճառք—խանութներում և միտիգներին ու հանդեսներին վալրերում, գնորդ անդամներին անհրաժեշտ սովորականից ավելի զեղջ, կամ այդ զեղջը հատկացնելով չքավորներին կոոպերացման ֆոնդին:

6. Պարզաբանել և մասսայականացնել տնտեսման ուժիմը կոոպերացիայում կիրարկելու խնդիրը և կոնկրետ կերպով ցուցադրել, թե տվյալ կոոպերատիվի վարչությունն ինչպես է կիրարկել տնտեսման ուժիմը և ինչ արդյունքների է հասել:

7. Ոգտագործել պատի լրագիրը՝ հատուկ համարում պարզաբանելով կոոպերացիայի միջազգային որվա նշանակությունը և կոնկրետ տեղեկություններ գետեղելով տեղական ու շրջանի այլ կոոպերատիվների գործունեության մասին—վորպեսզի մասսաների հետաքրքրությունը շարժվի՝ անհրաժեշտ է տալ զանազան կոոպերատիվների համեմատական պատկերը:

8. Միտինգների, հանդեսների և այլ վալրերում, ինչպես նաև խրճիթ ընթերցարաններում պետք է կազմակերպել կոոպերատիվ գրականության եժան վաճառք:

9. Այդ որը մոգական լապտերների միջոցով պետք է ցուցադրել կոոպերատիվ կամ առհասարակ հեղափոխական նկարներ:

10. Ցանկալի է, վոր թե կոոպերատիվները և թե հասարակա-

կան մարդաշատ վալրերը զարդարված լինեն դրոշակներով, կոոպերատիվ պլակատներով, լոգոնգներով, և այլն:

11. Հասարակական մարդաշատ վալրերում է, վոր պետք է հատուկ հարմարություններ ստեղծել անդամագրության, փայավճարների լրիվ գանձման, կրկնակի փայ գանձելու (վորտեղ այդ հնարավոր է) և կոոպերատիվ գրականության տարածման համար:

12. Պիտի համաձայնություն զալ համապատասխան կազմակերպությունների հետ և այդ որը կինպատժողովներից և կոմսոմոլից հանդիսավոր ձևով պետք է առաջ քաշել կոոպերատիվ աշխատանքի պրակտիկանտներ ու պրակտիկանտուհիներ:

13. Այնտեղ, ուր հնարավոր է, խրճիթ ընթերցարաններին և ակումբներին կից պետք է բացել կոոպերատիվ անկյուններ:

14. Գործող խրճիթ ընթերցարաններին ու ակումբներին կից կոոպերատիվ խմբակների նախաձեռնություն պետք է կազմակերպել կոոպերատիվ խնդիրներին վերաբերվող զեկուցումներ, հարց ու պատասխանի յերեկոներ և այլն:

15. Տոնակատարություն կազմակերպման ժամանակ ամեն կերպ պետք է աշխատել կիրառել ազիտացիայի ու պրոպագանդայի պարզ ձևերն ու մեթոդները:

Սրա հետ միասին՝ ազիտացիայի հիմնական ուղղություն կենտրոն պետք է դարձնել խորհրդային կոոպերացիայի հեռանկարները՝ միջակների ու չքավորների կոոպերացումը, կոոպերատիվի անդամի ինքնազարգացումը, տնտեսման ուժիմի կիրառումը, գների իջեցումը, Սոցիալիստական կուտակումը և այլ խնդիրներ:

Կոոպերացիայի Միջազգային Որվա ճոհակա-
առուրյան Կենտրոնական Հանձնաժողով.

**ՏՆՏԵՍՄԱՆ ՌԵԺԻՄԸ ԱՅՆ ԿԱՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ
ՄԵԿՆ Ե, ՎՈՐՈՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԱՐԱԳԱՅՆՈՒՄ Ե ԻՐ
ԸՆԹԱՑԲԸ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ**

Կոոպերացիային Միջազգային Տոնակատարութեան Որը
ԽՍՀՄ-ի կոոպերացիան, ուրիշ յերկրների կոոպերացի-
այի հեղափոխական թեմի հետ միասին, ձգտում է, վոր կո-
ոպերացված ըստ մասսաները միանան ու համախմբվեն՝
համաշխարհային կապիտալի դեմ պայքարելու համար:

Բայց արեւմտյան-յեւրոպական կոոպերացիայի հա-
մաձայնողական ղեկավարների մեծ մասը ամեն ջանք
գործադրում է, վորպեսզի վերացնի կոոպերացիայի հեղա-
փոխական նշանակութունը յեւ կոոպերացիայի Միջազգա-
յին Որվա դերը սահմանափակի միմիայն կոոպերացիա-
յի անդամներ հավաքելով:

Կեցցե՛ միջազգային Հեղափոխական կոոպերացիայի
որը!

Կեցցե՛ Խորհրդային կոոպերացիան!

Կորչեն յեւրոպական կոոպերացիայի համաձայնողա-
կան ղեկավարները!

ԿՈՈՊԵՐԱՅԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԸ

Կոոպերացիայի միջազգային տոնը այն սակավաթիվ տո-
ներից մեկն է, վորոնք կոչված են համագործակցութեան հրավի-
րելու ամբողջ աշխարհի բանվորներին և գյուղացիներին:

Միևնույն ժամանակ նա այդ տոներէց ամենամեծն է և
դեռ չի կարողացել խորը տրագիցիաներ ստեղծել ու աշխատա-
վորական լայն մասսաների համակրանքը վաստակել: Յեթե մա-
յիս մեկի տոնը արդեն խոշոր ծառայութեաններ է մատուցել
պրոլետարիատի համաշխարհային հեղափոխական շարժմանը,
յեթե նա դարձել է դասակարգային պայքարի զենք, այդ նրա-
նից է, վոր նա ծնունդ է առել ու աճել է հենց հեղափոխական
շարժման որորոցում և պրոլետարիատի անմիջական ծնունդն է:

Բոլորովին ուրիշ ծագում ունի Կոոպերացիայի Միջազգա-
յին Որը. յեթե նույնիսկ նրա հիմնարկման, նրա սահմանելու մտա-
դրութեանն էլ հին է, դոնե փաստորեն նա ծնունդ է առել սը-
րանից 4 տարի առաջ՝ Միջազգային Կոոպերատիվ Ալյանսի վո-
րոշման հետևանքով:

Յեւ յեթե մայիսի մեկի տոնի բախտը գտնվում է պրոլե-
տարիատի ձեռքում, ապա Կոոպերացիայի Միջազգային Որը դեռ-
ևս ամբողջովին մասսաների սեփականութեանն չի դարձել — վո՛չ
թե նրա համար, վոր նրա գաղափարը չի վողեւորում մասսանե-
րին, վո՛չ այն պատճառով, վոր նա հնարովի յէ, խորթ է և այլն,
այլ նրա համար, վոր Կոոպերացիայի Միջազգային Ալյանսը, այդ
որվա հիմնադիրն, ինքն է այդ տոնը գետեղել ու տիրիտարիզմի
շրջանակների մեջ, դարձրել այն ինչ վոր սգի տոն, զրկելով
նրան ռազմատենչ, պաթեթիկ, ցնծալի նշանակութեանից, ինչ-
պիսին պետք է լինի ըստ եյութեան կոոպերացված բանվոր-
ների ու գյուղացիների համախմբման որը, — ցույցերի, նվաճու-
մաների և դեպի կապիտալիստական լուծն ունեցած ատելութեան
որը, կոոպերացիայի և պրոլետարիատի հեղափոխական շարժման
համերաշխութեան որը:

Այդ նրանից է, վոր միայն խորհրդային կոոպերացիան է
հասկանում այդ որն իբրև այդպիսին, միայն մենք ենք ըմբու-
նում նրան այդ վողով, այն ինչ՝ Արեւուտքի բուրժուական կո-
ոպերատորները և Ալյանսի այսորվա վարիչներն այդ տոնի նշա-

նակությունն ու նպատակներն այլ կերպ են պատկերացնում. այնպես, ինչպես վոր կոոպերացիայի ամբողջ զբուծյունն էլ նրանք «մի փոքր այլ կերպ» են ըմբռնում, քան մենք: Վերոնք են մեր մոտեցումի տարբերությունները: Այդ հարցը բավականին ծեծված և հայաստանի բանվորների ու գյուղացիների կողմից: Բայց այստեղ անհետաքրքրական չէր լինի պատկերացնել նրանց կոոպերատիվ գործունեությունը մի քանի պերճախոս փաստերով, և այն ժամանակ հասկանալի կլինի, թե ինչու Ալյանսը իրախոսում է կոոպերացիայի Միջազգային Տոնի որը. հասկանալի կդառնա նաև այն, թե այդ տոնը ամբողջ աշխարհում յերբ ձեռք կբերի իր կոչմանն արժանի նշանակությունը և յերբ իր համապատասխան դերը կխաղա:



Բելգիայի «Հառաջ» կոոպերատիվի շենքը:

կրետ ասենք—ինչպես Գենտի համագումարում, այնպես էլ գործկոմի Փարիզյան նիստում, մենք զրեցինք արհեստակցական

նորհրդային կոոպերացիան իր ներկայացուցիչներն ունի Ալյանսի կենտրոնում և գործադիր կոմիտեում: Մենք մեր այդ ներկայացուցիչների միջոցով, քանիցս հարց ենք հարուցել, վոր կոոպերացիան յերբեք չի հասնի իր հիմնական նպատակներին, յեթե նա կպարփակվի կոոպերատիվ առևտրի նեղ շրջանակներում և չի հարի պրոլետարիատի հեղափոխական շարժմանը: Կոո-

միությունների հետ համագործակցելու հարցը:

Ուրիշ կերպ չէր կարող վարվել խորհրդային կոոպերացիան, վոր համոզված էր, թե կոոպերատիվ հասարակակարգ հաստատելը և կապիտալիզմին հաղթելն ուսուպիա յի, մտացածին ու անհասանելի յի՝ առանց քաղաքական իշխանությունը նվաճելու:

Ու չնայելով, վոր մեր առաջարկը յվրոպական կոոպերատորներից վրմանք պաշտպանեցին, այնուամենայնիվ Ալյանսը ձայների մեծամասնությամբ վորոշեց պրոֆմիությունների հետ վոչ մի գործ չունենալ և հետևել կոոպերացիայի քաղաքական չեզոքության հին, հետադիմական սկզբունքին:

Միթե հարկ կա ապացուցելու, վոր օյդպիսի վորոշում կարող է յին հանել միայն բուրժուազիայի կաշառված սպասարկուները:

Մենք առաջարկում է յինք բողոքել Ցանկովի դեմ՝ Բուլղարիայի ծաղկած կոոպերացիան (Союз «Освобождение») վճնչացնելու համար, ֆաշիստների դեմ, վորոնք վոչնչացրին Իտալական «Լոժե-նացիոնալ»-ն, այն կոոպերատիվ միությունը, վոր դեկավարում է յին արմատականներն ու սոցիալիստները: Բայց Ալյանսը չուզեց պաշտպանել նոյն իսկ իր անդամներին և Ալյանսի գլխավոր քարտուղար Գ. Մեյը, Մուսոլինիի անունով ուղարկած իր հեռագրում անջնջելի խայտառակություն է առնում իր վրա: Այդ հեռագրում Ալյանսը խնդրում է հնալածել Իտալական կոոպերատորներին, ապացուցելով, վոր նրանք յեղել են լոյալ քաղաքացիներ:

Վոչ թե բողոք, այլ խնդիր, վոչ թե ատեություն ցույց, վոչ թե հասարակական ճնշում, այլ ծնկաչոք լիզում ֆաշիստ առաջնորդի վոտքերի:

Այդպես է Ալյանսը:

Յեթե նրա առաջնորդները ֆաշիստներ չեն, ապա ֆաշիստների սպասարկուներն են:

Ալյանսի մենչեիկ առաջնորդները դեմքերը ավելի պարզորեն ներկայացնելու համար՝ ֆուում եավելացնել, վոր մեր «Ցենտրոսյուզի» կոչը՝ Անգլիայի գործադուլավոր բանվորներին աջակցություն ցույց տալու մասին, համակրություն գտավ Անգլիայի մի քանի առանձին կոոպերատիվների կողմից միայն, իսկ Ալյանսի Գործկոմի Անտվերպենյան նիստում արած մեր առաջարկները մերժվեցին միևնույն տխրահուշակ չեզոքությունը պահպանելու նըպատակով:

Այդպես և Ալյանսը:

Յեվ միթե վարմանալի յե, վոր այդ նոր տոնը, շնորհիվ դեղին առաջնորդների դավերի, պատշաճ թափ չստացավ և անցյալ տարիները արտասահմանում անցավ զուսպ ու ինչպես վերն ասացինք, համարյա սգի պես:

Հասկանալի յե, դրան քիչ չափով չնպաստեց ֆաշիզմի, Հինդենբուրգի, Մուսոլինիի ու նրա համհարզների քաղաքական ռեժիմը:

Սակայն վորտեղից կարող ե հաղթանակ լինել, յերբ Ալյանսի առաջնորդները արմատապես խեղդում են կապիտալիզմի դեմ նետված լողունները. կոոպերացիայի միջազգային որը, նրանց ըմբռնողությամբ, միմիայն կոոպերացիայի ուժերի ամրացման որ և, նոր անդամներ հավաքելու որ և այլն:

Խորհրդային կոոպերացիան իր յերկրում այդ տոնը տոնեց մեծ ցնծությամբ. այդ տոնը համաժողովրդական տոնի բնույթ ստացավ: Խորհուրդների յերկրում, վորտեղ կոոպերացիան պե-

տույթյան և դեկա-վար կուսակցու-թյան ուղադրու-թյան առանցքն ե կազմում, ուր նա բանվորների և գյուղացիների ան-սահման համա-կրանքն և վայե-լում, ուր նա ապա-հովարար կարող ե ծաղկել, և ուր բո-լոր քաղաքացիների մտածմունքներն ուղղված են կոոպե-րատորների հասա-րակակարգ ստեղ-ծելուն (մեր մեծ ա-ռաջնորդի ավանդ-ները), — կոոպերա-ցիայի տոնը չն կա-րող կառնավալների



Յենթոսոյուզի գլխավոր շենքը
Մոսկվայում

շարժառիթ չդառնալ, ցույցերի առարկա չլինել, հասարակական բնույթյան նյութ չծառայել և այլն:

Այդ որը Խորհրդային կոոպերացիան, այսինքն նրա 10-ը միլլիոնահափ կոոպերացրած մասսաները և ամբողջ մնացյալ հա-րյուր միլլիոնանոց — մասսանվոր դեռևս չի կարողացել մեր շար-քերը մտնել, բայց արդեն հետևում ե մեզ, — ստուգում են իրենց նվաճումները, ուղղումներ են մտցնում իրենց գործունեյության մեջ, ապագա աշխատանքի ուղիներ են նշում, իրենց առաջնոր-դի՝ Իլյիչի և նրա կուսակցության ավանդներն են սովորում, վորպեսզի ավելի ճիշտ և համարձակ կերպով հաղթության նոր հրաշքներ գործեն: Լավ ե, վոր այդ հաղթանակը մեզնում ապա-հոված և արդեն:

Մեր նվաճումները խոշոր են. նրանք ճշմարիտ վոր ընդու-նակ են հիացմունք պատճառելու:

Դեռ ևս ցարական ռեժիմի որոք Ռուսաստանի կոոպերա-ցիան իր համար վորոշ միջուկ պատրաստեց, իսկ Խորհրդային իշխանության ժամանակ նրա նվաճումները տասնապատկվեցին: Առաջին սպառողական ընկերությունը բացվեց Կինով ավանում 1864 թվին: Արդեն 1906 թվին, կոոպերացիայի բուռն աճման սկզբին, սպառողական ընկերությունների թիվը հասնում եր 1332-ի, 1910 թվին նրանց թիվը հասել եր 4814-ի. պատերազ-մից առաջ՝ 1914 թ. Ռուսաստանում կար ընդամենը 11,400 ըն-կերություն՝ մի միլիոն 650 հազար անդամներով, իսկ 1924 թվին ունեցանք 17,000 կոոպերատիվ 25,000 խանութներով և մոտ 6 միլլիոն անդամներով:

Ցենտրոսոյուզի լիազորների 40-րդ համագումարում վար-չությունը զեկուցեց, վոր 1926 թվին կոոպերատիվների թիվը հասել ե 22,000-ի, իսկ բաժնետերերի թիվը 800 միլիոնից ա-վելի յե:

Առևտրական շրջանառությունը՝

1919 թվին կազմում եր 290 միլլիոն վոսկի ռուբլի,

1923 " " 520 "


1925-26 " " 2,904 "

Այդպիսով՝ նախնական ցանցի փայտերակա կապիտա-լը հասել ե այժմ 31 միլլիոն ռուբլու:

Նույալիս խոշոր նվաճումներ ենք տեսնում նաև գյուղա-տնտեսական-վարկային կոոպերացիայի ասպարիզում:

Իր կազմակերպչական շրջանում գյուղատնտեսական կոոպե-րացիան ամբողջ Միության մեջ ունեւ 600 կոոպերատիվ, 44 մի-ություններով: Արդեն 1925 թ. գյուղատնտեսական կոոպերա-ցիան բաղկացած եր 7 կոոպերատիվ կենտրոններից, 415 միու-թյուններից և 45 հազար նախնական կոոպերատիվներից, վո-

րոնք միացնում էին 4 միլիոն գյուղացիական տնտեսություններ։
Գյուղատնտեսական կոոպերացիայի շրջանառությունները
դեռևս 1924 թ., առանց Ուկրաինայի, կազմում էր 619 միլիոն
ռուբլի։ Իսկ տնայնագործական կոոպերացիայի նոր կենտրոննե-
րը 1925 թվի նախորդակին ունեյին 11,000 կոոպերատիվներ և
մոտ կես միլիոն անդամներ։



Ռուգեկյան պիոներների առաջին խանութը

և բանվոր զասակարգին, վորտեղ արտադրության միջոց-
ները պրոլետարական պետության սեփականությունն են
կազմում—կոոպերացիան մեր սոցիալիստական շինարարության
գլխավոր հիմունքներից մեկն է։


Բոլորովին ուրիշ դրություն և տիրում արտասահմանում,
այնտեղ կոոպերացիան հեծում է ֆաշիզմի կրունկների տակ, մաշ-
վում է իր դավաճան առաջնորդների ղեկավարության ներքո և
վորքան ել խոշոր լինեն նրա նվաճումները, նա հանձին կապի-

Այդ նվաճումները
քիչ չեն. այս տար-
վա ապրիլին Ցենտ-
րոսոյուզի լիազոր-
ների 40-րդ ժո-
ղովում ն ե ր կ ա
դանվոր արտասահ-
մանյան հյուրերը
ասում էին, վոր
Խորհրդային կոո-
պերացիայի ունե-
ցած հաջողություն-
ները զարմանք են
պատճառում իրենց։
Ուրեմն՝ ինչո՞ւ մենք
ինքներս կոոպերա-
ցիայի որը չհաշ-
վենք մեր նվաճում-
ները և չվորոնենք
նրա ապագա հաջո-
ղություններն ապա-
հովող ուղիներ։

Մեր յերկրում,
վորտեղ քաղաքա-
կան իշխանություն-
նը պատկանում

տալիստական տրեստների ու սինդիկատների այնպիսի, ուժեղ
թշնամիներ ունի, վոր նրանց դեմ կռիվ մղելու գործում նը-
ման ե կարգոնի սուր շառաչեցնող մի վոդորմեյի Դոն-Քիշոտի։

Կապիտալիստական բոլոր յերկրներում, միասին վերցրած,
սպառողական կոոպերացիայում հաշվվում է մոտ 30 միլիոն ան-
դամ, վորոնք համախմբված են 19,500 սպառողական ընկերու-
թյունների մեջ։ Անգլիական կոոպերացիան, վոր ծնունդ է առել
82 տարի սրանից առաջ և սկզբում ուներ ընդամենը 28 ան-
դամ, այժմ ունի մոտ 5 միլիոն անդամ։ Նրանց փայտտիրական
կապիտալները հասնում են 700 միլիոն ռուբլու։ Անգլիական կոո-
պերացիայի շրջանառությունը 1923 թվին հասնում էր $2\frac{1}{2}$ մի-
լիարդ ռուբլու։ 80 տարվա ընթացքում Անգլիական կոոպերացիան
ունեցել է 200 միլիոն ռուբլու զուտ ոգուտ։ Բելգիայում կան 394
ընկերություններ՝ 400,000 անդամով։ Այդ ընկերությունների
տարեկան շրջանառությունը հասնում է 94 միլիոն ռուբլու։



Անգլիական կոոպերացիայի շենքը Գերկա-
յում—82 տարի հետ

Մենք չշատ հե-
ռու կգնայինք,
յեթե նույն իսկ
համառոտակի
հիշեյինք այն
թվական տվյալ-
ները, վորոնք
բնորոշում են ար-
տասահմանյան
կոոպերացիայի
նվաճումները։
Ավելի լավ է լը-
սենք Ֆրանսիա-
կան ամենահին
կոոպերատորնե-
րից մեկին՝ պրոֆ.
Շառլ Ժիդին, վո-
րը յեղել է Խոր-
հրդային Միու-
թյան մեջ և զըտ-
նում է, վոր մեր
կոոպերացիան
Յեվրոպականից
չափազանց բար-
ձր է կանգնած։

Ահա թե նա ինչ էր ասում 1923 թվին՝ Գիտտի կոոպերատիվ ցուցահանդեսում:

«Իհարկե, կոոպերատիվ շարժման նպատակն է միջազգային առևտուրը փոխարինել ժողովուրդների հսկայական կոոպերացիայով: Վերջինս է կոոպերատիվ շարժման բնորոշ կողմը: Ի՞նչ նշանակություն ունեն անդամների թիվն ու շրջանառությունների չափերը, յեթե կոոպերացիան այդ խնդիրներն աչքաթող է անում:

Ի՞նչու համար է կոոպերացիան ուզում աշխարհը նվաճել, յեթե նա կորցրել է իր հոգին, յեթե նա ուրիշ նպատակ չունի, ուրիշ արդյունքներ չի տալիս, բացի եթան գներով ապրանք վաճառելուց և դիվիդենդներ բաշխելուց: Մեր ձգտումն է, վորպեսզի կոոպերացիան պաշտպանի իր հոգին, այսինքն գործոն հանդիսանա հասարակության վերակազմության համար» և այլն:

Իհարկե, կապիտալիստական Արևմուտքի կոոպերացիան խոշոր է, ընդարձակ է, բայց յեթե նա, ինչպես Շառլ Ժիդն է ասում, կորցրել է «իր հոգին», յեթե նա վոչ միայն դադարել է

հասարակական վերակազմության գործոն հանդիսանալուց, այլևս չի ուզում ոգնել իր անդամներին, թեկուզ հենց միևնույն անգլիական հանքագործ բանվորներին՝ հասարակությունը վերակազմելու համար մղած նրանց պայքարում, այդ դեպքում, իսկապես վոր, ի՞նչ նշանակություն ունեն այդ կոոպերացիայի



Բելգիական «Հառաջ» կոոպերատիվ գլխավոր շենքը

նվաճումները: Յեվրոպական կոոպերացիայի այդ դեմքը հետզհետե ավելի յե մերկանում Արևմուտքի հեղափոխականացող

մասսաների առաջ և այժմ արդեն նշմարվում է, վոր բանվորները հեռանում են կոոպերացիայից: Առաջնորդների հետադիմական քաղաքականությունը լավագույն դեպքում առաջացնում է այսպես կոչված «թղթյա» անդամություն, այսինքն՝ սովառողների բոյկոտ: Նրանց այդ նույն քաղաքականությունն էլ վերագրվում է գործադուլներ են առաջացնում կոոպերատիվ ձեռնարկությունների մեջ:

Այնուհետև Արևմտյան Յեվրոպայի կոոպերացիայի առաջնորդները ու մասսաների միջև կոնֆլիկտները դառնում են անխուսափելի և ամենուրյա յերևույթ:

Ընթերցողն արդեն տեսնում է մեր և բուրժուական կոոպերացիայի մեջ յեղած տարբերությունը, բայց ի՞նչպիսի գնահատություն են ստանում մեր և նրանց նվաճումները, հվ ի՞նչ ուղղություն մե անում:

Ահա թե ինչ է գրում այդ մասին ընկ. Խինչուկը. «Մեր և արևմտա-յեվրոպական կոոպերացիայի նվաճումների մեջ յեղած հսկայական դանազանությունն էլ հենց այն է, վոր Խորհրդային կոոպերատիվ շարժման առաջադիմության ամեն մի քայլը սոցիալիստական շինարարության խորացման քայլն է այն միջոցին, յերբ մեր արևմտա-յեվրոպական կոոպերատորների բոլոր հաջողությունները վոչ այլ ինչ են, բայց յեթե կապիտալիստական աշխարհի անմատչելի ամբողջությունների շուրջը միևնույն տեղում կանգնած անհաջող դոփելը»:

Այստեղից էլ բղխում են այն խնդիրները, վոր այդ յերկրներից ամեն մեկը պետք է կատարի կոոպերացիայի միջազգային տոնի ուրը:

Նրանք պետք է վորոնեն իրենց «կորցրած հոգին»: Նրանք կռիվ պետք է մղեն այն բանի համար, վորով կոոպերացիայի նվաճումներն արժեքավոր են դառնում, այսինքն՝ քաղաքական ազատության համար: Անհրաժեշտ է, վորպեսզի նրանք կոոպերացիայի անցնելիք ճանապարհը մաքրեն ֆաշիստական տատակներից:

Իսկ մենք: Մեր անելիքը պարզ է: Մեր առջև դրված են մեծ խնդիրներ. ամբապնդել մեր նվաճումները, հաղթահարել մեր հիվանդոտ կողմերը, կոոպերատիվ համառ ուսմամբ լրացնել այն ճեղքվածքը և այն խոշոր նվազումները (устычки), վորոնք տեղի յեն ունենում մեր անկուլտուրականությունից հետևանքով: Առաջնորդի ավանդները պետք է կրկենք և նրանց իրականացնելուց անկուլտամբ պետք է համակվենք: Պատվության հետ ձեռք-ձեռք

քի տված պետք է լծվենք ինդուստրիալիզացիայի ծանր գործին և յերկրում պետք է մտցնենք սոցիալիզմ: Պետք է իրականացնենք հասարակայնության, ծրագրայնության և անտեսման գաղափարները:

Կոոպերացիայի միջազգային ուրը ջերմ վողջույն պետք է հղենք բուրժուական բանտերում տառապող հեղափոխական կոոպերատորներին, հեռվում կոիվ մղող մեր բարեկամներ-համախոհներին, և հաստատուն հեղափոխական խոսք պետք է տանք, վոր առաջ կմղենք մեր կոոպերատիվ գնացքը բուռն ընթացքով: Համոզված ենք, վոր այդ գնացքը Իլլիչի կուսակցության իմաստուն ղեկավարությամբ չի շեղվի ճանապարհից:

Արելմուտքի հեղափոխական կոոպերացիայի աճումն ու զարգացումն այնքան ավելի արագ ու հաջող կնքանան, ինչքան ավելի արագ ու լրիվ կերպով արելմուտքի աշխատավորության շայն մասնակերը համոզվեն, վոր խոշոր են մեր նվաճումները, խորհրդային տնտեսության հաջողությունները, կայուն են խորհրդային հասարակությունը ու խորհրդային կոոպերացիան:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՆՎԱՃՈՒՍՆԵՐՆ ՈՒ ԹԵՐՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին տարիներում սպառողական կոոպերացիան մեզ մոտ խոսքը ԳՎԱԳՈՒՄՆԵՐ և ունեցել:

Նրա առաջ դրված են մեծ խնդիրներ—նա մեր յերկրի բանվորներին ու գյուղացիներին պետք է կոոպերացիայի շարքերը քաշի՝ իրականում համոզելով նրանց, վոր իրենց համար կոոպերատիվ առևտուրն ավելի ձեռնտու չէ, քան մասնավորը:

Կազմակերպելով բանվորներին ու գյուղացիներին՝ նա պետք է ձգտի լիովին բավարարել նրանց սպառողական կարիքները—տալով նրանց բարձր վորակի և աժան ապրանքներ:

Այսպիսով՝ նա կծառայի իբր ձեռնտու միջնորդ—պետական արդյունաբերության և սպառողի միջև. նա կգտնա այն ամուր՝ ողակը, վոր ռազկապում է գյուղը քաղաքի հետ:

Գյուղի և քաղաքի շաղկապումը կոոպերացիայի միջոցով—կոոպերացիայի վրա դրված այդ խնդրի իրագործումը հաստատված է սոցիալիզմի կառուցման համար:

Յերկիրը ինդուստրիալիզացիայի յենթադրեկ և դրա հետ միասին բնակչությանն իսկապես ու գլխավոր կոոպերացիալ—այդ նշանակում է յերկիրը տանել դեպի սոցիալիզմ:

Հայաստանի սպառողական կոոպերացիան վերջին տարիներում աշխատել է հնարավորին չափ արգարացնել իր վրա դրված հույսերը ու թեև նա դեռ շատ թերություններ ունի, թեև նա բոլոր խնդիրների բարեհաջող վերջնական լուծումից դեռ շատ հեռու չէ, այնուամենայնիվ նրա նվաճումները զգալի չեն:

1924 թվի հունվարի 1-ին նա ունեցել է 8,148 փայտեր, իսկ այսօր ունի մոտ 60,000 կոոպերացված գյուղացի ու բանվոր: Յերկրի գյուղացիական անտեսությունների մոտ 32%-ը կոոպերացման է յենթարկված:

Աճում են նույնպես կոոպերացիայի սեփական միջոցները, առ 1-ն հունվ. 1921 թ. ունեցել է 27,728 ու. փայտազրամագլուխ, իսկ առ 1-ն ապր. 1923 թ. » » 205,310 ու. » »

Հիմնական գրամագլուխը յեղել է.

1924 թ. հունվ. 1-ին . 11,932 ուր.

1926 թ. ապր. 1-ին . 399,232 ուր.

Բայց այս սեփական միջոցները, վոր ունի կոոպերացիան այսօր, հերիք չեն անում նրա շրջանառության համար, և նա

1008
801
21/4/25

ստիպված է լինում պետութունից մեծ փոխառություններ անել:

Սպառողների պահանջը չափազանց արագ է աճում — ավելի արագ, քան կոոպերացիայի միջոցների աճումը:

1923 թվին մեր կոոպերատիվ ցանցն ամառական 93.000 ուրբուռ շրջանառություն ունեւր, իսկ այս տարի նա անում է ամսական 1 միլիոն 100 հազար ուրբուռ առևտուր: Մի ամբողջ միլիոնով ավելացել է ամսական շրջանառությունը, իսկ տարվա հաշվով՝ մոտ 10-11 միլիոն է ավելացել:

Այդպիսի մեծ շրջանառության համար մեծ միջոցներ են հար-



Հայկոոպի գլխավոր պահեստն ու գրասենյակը փողոցից

կալուր: Փոխառու միջոցների համար մենք տոկոսներ ենք տալիս և այն ել քիչ չենք տալիս և ահա թե ինչու կոոպերացիային առաջադրված է սեփական միջոցներն ավելացնելու, կուտակումներ կատարելու ու իր այդ միջոցները կենդանի շրջանառության մեջ պահելու խնդիրը:

Յեթե մեր սեփական միջոցները շատ լինեն, մեր ծախսերը կքչանան, վորովհետև մենք բանկերին տոկոսներ չենք տա, մուրհակներից կազատվենք, իսկ յեթե կոոպերացիայի ծախսերը իջնեն, նա կկարողանա ապրանքների գներն էլ ավելի իջեցնել: Ճիշտ է, հենց այսուր էլ կոոպերացիան մասնավոր առևտրա-

կանից եժան է վաճառում իր ապրանքները, բայց նա էլ ավելի պիտի եժանացնի այն:

Այդ խնդիրն է, վոր այսուր դրված է կոոպերացիայի առաջ — **եժանացնել ապրանքները:**

Ապրանքները կոոպերացիան կարող է եժանացնել միայն այն դեպքում, յերբ նրան կհաջողվի իջեցնել իր ծախսերը: Դեռ մինչև այսուր էլ կոոպերացիայի ապարատը շատ թանգ է նստում սպառողի վրա. դեռ շատ ու շատ ավելորդ ծախսեր ունի նա: Ճիշտ է, անցյալներում կոոպերացիայի ծախսերը հասնում էին 10%-ից մինչև 28%-ի, իսկ տեղ-տեղ ել՝ մինչև 35%-ի, մինչդեռ այսուր նրանք տատանվում են 8%-ի և 14%-ի միջև և միայն տեղ-տեղ հասնում են 18%-ի. ուրեմն՝ ծախսերը մի քանի անգամ իջել են: Բայց դա դեռ քիչ է, վորովհետև Ռուսաստանի վործը ցույց է տվել, վոր ծախսերը կարելի յե 8%-ից էլ իջեցնել և 8%-ից բարձրը անթույլատրելի համարել:

Գոոպերացիան մեղնում ապրանքների վրա միջին հաշվով գալիս է վերադիր 15,5%: Կան կոոպերատիվներ, վոր ընդամենը 10% են գալիս, բայց կան այնպիսիներն էլ, վոր 20%-ից էլ են անցում:

Մինչդեռ յեթե ծախսերը կըճատվեն, կարելի կլինի ամենուրեք վերադիրը հասցնել ամենաշատը 10%-ի, այն պայմանով, վոր հեռոցհեռ այդ տոկոսն էլ իջեցվի:

Ահա թե ինչու տնտեսման ուժիմը, վոր սկսել ենք կիրառել յերկրի տնտեսության բոլոր ասպարեզներում, հատկապես պետք է հաստատենք և կոոպերատիվ առևտրում:


Յեթե կոոպերացված մասսան ձեռնամուխ լինի տնտեսման ուժիմը կոոպերացիայում անց կացնելու գործին, նա անշուշտ կգտնի այն ավելորդ ծախսերը, վոր կատարվում են կոոպերացիայում և վոր կարելի յե կըճատել:

Ծախսերը կըճատվու հետ միասին պետք է մտածել և սեփական շրջանառու միջոցները մեծացնելու մասին: Մեր ունեցած միջոցների մեծ մասը քնած է կամ պարտապանների մոտ, կամ գույքի մեջ և ամեն ուր, բայց վոչ շրջանառության մեջ: Քնած գրությունից դրանց պետք է հանել:

Սպառիկ առեւթիւն պեճ է վերջ տալ. հին պարտքերը պետք է գանձել գուր տեղը շնքեր շինելուց ու գույքեր գնելուց պետք է խուսափել, աշխատել, վոր յուրաքանչյուր կոպեկը առևտրի մեջ լինի:

Աշխատանքը պետք է ծրագրված կերպով տանել. կոոպերացված հասարակությունը պետք է իր վարչությունից վոչ միայն հաշիվ պահանջի կատարած աշխատանքների համար, այլ և՛ պետք է պահանջի ապագա աշխատանքների ծրագիր:

Պետք է աշխատանքը ծրագրել յեղած միջոցների համեմատ և այնպիսի գնումներ կատարել ու այնպիսի քանակով, վոր շրջանառությունը արագ կատարվի: Դանդաղ շրջանառությունը վնաս է բերում կոոպերացիային:



Հայկոոպի գլխավոր պահեստն ու գրասենյակը բակից

Ահա ևս մի պակասություն, վոր ունի մեր կոոպերացիան — նա դեռ չի սովորել ծրագրով աշխատել:

Սեփական միջոցները պիտի ավելացնել վոչ միայն կուտակումներով, այլ և փայերի գանձումով և նոր անդամներ զրավելով:

Նվաճումներ ունենալ, բայց թերություններ էլ շատ ունենալ, յեթե այդ թերություններից չազատվենք, հետագայում նվաճումներ չենք ունենալ: Մեր առաջ զբված խնդիրների մի մասը լուծել ենք, բայց դեռ շատ խնդիրներ ունենք չլուծած: Հարկավոր է, վոր կոոպերացված բանվորությունն ու գյուղացիությունը

կոոպերացիայի Միջադպային Որն իրենց նվաճումները հաշվի առնելու հետ միասին, ծրագրեն իրագործել կոոպերացիայի առաջ ծառացած կարևոր ու անհետաձգելի խնդիրները՝ **ՏՆՏԵՍՄԱՆ ՌԵԺԻՄԸ ԿԻՆՈՒՄԵՆՈՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻՆ, ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԳԻ ԽՈՍՏԱՅԵՆՈՎ**, զարկ տալով կոոպերացման գործին, — հատկապես չքավորության կոոպերացմանը, փայերի գանձմանը, և վորոշելով այդ սրվանից կոոպերացիայի գործերին ավելի մոտ կանգնել, ավելի ակտիվ աշխատակցել նրան:

ՏՆՏԵՍՄԱՆ ՌԵԺԻՄԸ ԽՍՏՈՐԵՆ ԿԻՐԱՌԵԼՈՎ ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ԵԺԱՆԱՑՆԵԼ ԿՈՊԵՐԱՏԻՎԻՑ ՎԱՃԱՌՎՈՂ ԱՊՐԱՆԲԸ:

ՏՆՏԵՍՄԱՆ ՌԵԺԻՄԸ ԲԻՂՈՒՄ Ե ԹԵ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻՑ ՅԵՎ ԹԵ ԱՄԵՆ ՄԻ ՍՊԱՌՈՂ ԱՆԴԱՄԻ ՇԱՀԵՐԻՑ:

ՄԵՐ ԳՅՈՒՂԻ ՄԻՋԱԿ ՅԵՎ ԶԳԱՎՈՐ ՏԱՐՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՈՊԵՐԱՏԻԱՆ ԼԱՅՆ ՃԱՆԱՊԱՐՀ Ե ԲԱՑՈՒՄ ԴԵՊԻ ԿՈՄՄՈՒՆԻՋՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

Հայգյուղկոոպի գործունեությունը սկիզբը պետք է հաշվել 1924 թվից: Այդ ժամանակվանից միայն Հայգյուղկոոպը սկսում է խոշոր գեր խաղալ Հայաստանի տնտեսական կյանքում: Մինչ այդ՝ հափազանց նոսր էր Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների ցանցը: 1924 թվին կային ընդամենը 13 կոոպերատիվներ, վորոնք լավ չէին կազմակերպված, թույլ էին և միացնում էին ընդամենը 1384 տնտեսություններ, այսինքն մեր տնտեսությունների 0,97%-ը:

Հետագա ամիսներում մենք տեսնում ենք, վոր Հայգյուղկոոպը հաստատ քայլերով առաջ է գնում և մեր գյուղի տնտեսական կյանքում դառնում է հասարակական-մասնայական մի կազմակերպություն:

1924 թվի հունվարից մինչև 1926 թ. հունվարը գյուղատնտեսական կոոպերատիվների ցանցը հետևյալ զարգացումն է ունեցել.

1924 թվի հունվարի 1-ին յեղել են 13 կոոպերատիվներ	
1925 " " " " " 87 " "	
1926 " " " " " 156 " "	
1926 " մարտի 1-ին " " 178 " "	

Այսպիսով՝ 1924 թ. հունվարի 1-ի նկատմամբ ցանցն ավելացել է 13,7 անգամ, իսկ 1925 հունվարի նկատմամբ 2 անգամ:

Տնտեսությունների կոոպերացման աճումը հետևյալ պատկերն ունի.

1924 թ. հունվարի 1-ին կոոպ. 1384 տնտ. կամ բոլոր տնտ. 0,97%-ը	
1925 " " " " " 10363 " " " " 6,90%-ը	
1926 " " " " " 21242 " " " " 14,20%-ը	

Այսպիսով՝ գյուղացիական կոոպերացված տնտեսությունները 1924 թ. հունվար 1-ի նկատմամբ ավելացել են 14,6 անգամ, իսկ 1925 թ. հունվար 1-ի նկատմամբ՝ 2 անգամ:

Ամենից ավելի աչքի յեն ընկնում պանրագործական և յուղագործական արտերները, ինչպես նաև վարկային ընկերությունները: Պանրա-յուղագործական արտերները 80-ն են և ընդգրկում են 5,603 տնտեսություններ, իսկ վարկային ընկերությունները 32-ն են և ընդգրկում են 13,914 տնտեսություններ: Նաև գյուղատնտեսական խողը տիպի ընկերություններ 16, մեղվաբուծական 16, մեքենաներ ոգտագործող ընկերություններ՝ 14:

Հայգյուղկոոպի մեջ մտնում են նաև այգեգործական, շերամապահական, հնդահանական, ծխախոտագործական, տնայնագործական-ձկնորսական, ձիարուծական, թռչնաբուծական և այլ ընկերություններ, ընդամենը 13 տեսակի:

Ըստ գավառների, ամենից մեծ չափով կոոպերացված են Լոռի-Փամբակ գավառի գյուղական տնտեսությունները (24,31%-ը) և ամենից փոքր չափով՝ Զանգեզուրի գյուղական տնտեսությունները (5,07%-ը):

Ընթացիկ տարվա մեջ Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիան արդեն ունի զարգացման ու խորացման լավ պայմաններ:

Պարզ է, վոր ցանցի ու տնտեսությունների աճման հետ միասին պետք է աճելին նաև Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի տնտեսական ու դրամական միջոցները: Նրա սեփական միջոցները, վոր կազմված են մուտքի ու փայլ վճար-հերից ու զանազան յեկամություններից, հետևյալ աճումն են ունեցել.

1924 թ. հոկտեմ. 1-ին 109,337 ո. 73 կ. վորից փայլվ. 97,566 ո.	
1925 " հունվար " 117,543 ո. 88 կ. " " 178,090 ո.	
1925 " հոկտ. " 230,948 ո. 62 կ. " " 188,845 ո.	
1926 " հունվար " 284,683 ո. — " " " " " " " "	

Այսպիսով՝ գյուղատնտեսական կոոպերատիվների սեփական միջոցները 1924 թվի հոկտեմբերի նկատմամբ ավելացել են 175,50%-ով, իսկ 1925 թվի հունվար 1-ին նկատմամբ՝ 142,20%-ով:

Կոոպերատիվ ցանցի ֆինանսական ուժեղացման հետ միասին ուժեղացել են նաև այդ ցանցի միությունների Հայգյուղկոոպի տրամադրության տակ յեղած սեփական, փոխառու և այլ բոլոր միջոցները, վոր հետևյալ պատկերն են ներկայացնում:

1924 թ. հոկտ. 1-ին 22,943 ո. 100,00%	
1925 " հունվ. " 179,915 ո. 759,30%	
1926 " հոկտ. " 1030,300 ո. 4499,10%	

Նշանակում է՝ 25 ամիսների ընթացքում այդ միջոցներն ավելացել են 45 անգամ:

Համապատասխան ձևով ավելացել է նաև Հայգյուղկոոպի շրջանառությունը, վոր 1924 թ. հոկտեմբերին յեղել է 166,166 ո., նույն թվի դեկտեմբերին հասել է մինչև 1.612,870 ոուրլու, իսկ 1926 թ. փետրվարի շրջանառությունն է 1.305,490 ոուրլի:

1924 թվին գյուղատնտեսական կոոպերացիան ապրում էր դեռ ևս իր կազմակերպչական շրջանը և հնարավորություն չուներ ընդգրկելու նաև տնտեսական աշխատանքի բոլոր կողմերը: Իսկ 1925 թվի յերկրորդ կիսում Հայգյուղկոոպի և կոոպերատիվ ցանցի տնտեսական աշխատանքը լայնացավ ու կենդանացավ: Կոոպերացված տնտեսությունների վերամշակման, նրանց արտադրության իրացման և կոոպերացված տնտեսությունների տնհրածեղտ մեքենաներ ու գործիքներ հայթայթելու աշխատանքն այժմ Հայգյուղկոոպի հիմնական գործն է:

Ծրագրի համաձայն՝ կոոպերացված տնտեսությունների միջոցով պետք է վերամշակվեն ու Հայգուղկոոպի միջոցով պետք է առաքվեն յոթ յերեք միլիոն յոթ հարյուր քսան և հինգ հազար ութը (3,725,000 ու.) գյուղատնտեսական զանազան մթերքներ:

Իսկ ընկերություններին գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ այդ ժամանակամիջոցում արդեն հայթայթվել են յերկու հարյուր յերսուն հազար ութը ու սահմաններում:

Գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով չուլից — դեպի տրակտոր:

Առանց լավ մեքենաների չենք կարող բարձրացնել գյուղական տնտեսությունը:

Դեղձկուհիներ մասնակցեք գյուղկոոպերացիայի շինարարությունը: Նա բարելավում է Ձեր կենցաղը, Ձեր տնտեսությունը:

ՍՄԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԵԼԻՔ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՍՈՍՎՈՐ ԾՐԱԳԻՐ

ԸՆԳԻՏՈՐ ԳՈՒՄՈՒՆԻՍՏԵՐ

1. Կոոպերացիայի Միջազգային Որվա տոնակատարություն ժամանակ անհրաժեշտ է զեկուցել տեղական կոոպերատիվի գործունեության մասին: Այդ զեկուցումը կարելի է միացնել կոոպերացիայի Միջազգային Որվա նշանակություն մասին ասվող խոսքին, կարելի է և առանձացնել՝ իբր հատուկ զեկուցում:

2. Ինչպես անցյալում, այնպես էլ այս տարի կոոպերացիայի Միջազգային Որվա տոնվելու է գյուղացիություն ու բանվորություն կապը կոոպերացիայի հետ ու ժողացնելու նշանաբանի տակ: Սակայն այս տարվա ընթացքում հատուկ նշանաբան է ստանում կոոպերացիայի միջոցների տնտեսման, ապրանքների գների իջեցման և կոոպերացիայի ասպարիզում սոցիալիստական կուտակումն ու ժողացնելու խնդիրները: Լավ կլինի, յեթե կոոպերացիայի Միջազգային Որվա կարգավելիք զեկուցումն անդրադառնար այդ բոլոր հիմնական խնդիրներին վրա և ընդգրկեր անցյալ տարվա կոոպերատիվ Միջազգային Որվա տոնակատարությունից հետո ընկնող ժամանակամիջոցի գործունեությունը:

3. Ամեն հնարավոր միջոց պետք է գործադրել, վոր այդ զեկուցման ներկա գտնվի ավյալ գյուղի կամ շրջանի գյուղացիություն մեծ մասը:

4. Զեկուցումը պետք է լինի պարզ, հակիրճ ու հասկանալի, — պետք է բերել միմիայն ամենահիմնական թվերը (անդամների աճման, շրջանառության, սեփական ու փոխառու միջոցների, փայլվճարների, մասին և այլն): Անհրաժեշտ է թվել ու բացատրել կոոպերատիվի բոլոր բացերը, թերություններն ու հաջողությունները, — պետք է ցույց տալ նաև այն միջոցները, որոնցով կարելի է վերացնել նկատված սխալներն ու անհավորոնցով կարելի է վերացնել նկատված սխալներն ու անհավորոնցները: պետք է ցույց տալ նաև աշխատավոր մասնակցներին դեպի կոոպերացիան քաշելու և նրանց կարիքները լրիվ բավարարելու միջոցները:

5. Ցանկալի է, վոր զեկուցման շուրջը բացվեն վիճաբանություններ, վորոնց կմասնակցեն անդամներն ու վոչ անդամները և իրենց դիտողությունները կանեն, իրենց ցանկությունները

կհայտնեն վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքների մասին:

6. Զեկուցման առթիվ հանված բանաձևում պետք է կարճ ու պարզ բնորոշել անցյալի սխալներն ու հաջողությունները և պետք է մատնանշել աշխատանքի հետագա ուղին:

Զեկուցելիս պետք է կանգ առնել հետևյալ հարցերի վրա

1. Վերջին տարվա ընթացքում ուժեղացել, թե թուլացել է ընկերությունը: Արդյոք կոոպերատիվի վարչությունը սերտ կապ հաստատել է կոոպերատիվի անդամների և առհասարակ բանվոր ու գյուղացի գնորդների հետ:

2. Վերջին մեկ տարվա ընթացքում աճել թե պակասել է անդամների քանակը. անդամներից քանիսն են չքավոր, միջակ և ունևոր: Ավելացել, թե պակասել է փայտավաճարների գումարը և ավենալանու կամ պակասելու պատճառն ինչ է: Վարչությունն ի՞նչ միջոցներ է ձեռք առել անդամավաճարները ժամանակին չմոծող անդամների նկատմամբ: Ամբողջ ընակչություն վճար տուկոսն է կոոպերացման յենթարկված:

3. Հաշվետու ժամանակաշրջանում քանի՞ ընդհանուր ժողով է յեղել և այդ ժողովներն ինչքան են նպաստել անդամների ու կոոպերատիվի մեջ սերտ կապ ստեղծելուն:

4. Վարչությունն ու վերստուգիչ հանձնաժողովն ի՞նչպես են կատարում իրենց պարտականությունները. վարչությունը վայելի՞ւմ է արդյոք անդամների հարգանքն ու վստահությունը, ի՞նչ է արված այդ վստահությունն ապահովելու համար:

5. Վերջին մեկ տարվա ընթացքում կոոպերատիվն ինչպիսի շրջանառություն է ունեցել. ըստ ամիսների աճել, թե նվազել է շրջանառությունը (պատճառները):

6. Կոոպերատիվի ապրանքները վճարողից են ձեռք բերվել. կոոպերատիվն ոգավել է՞ արդյոք վարկով և վճարողից և ի՞նչքան վարկ է ստացել: Արդյոք սերտ է յեղել կապը կոոպերատիվների Միություն, Հայկոոպի հետ: Ի՞նչպես է վերաբերվում Հայկոոպը գեպի տվյալ կոոպերատիվը և ի՞նչ կարծիքի յե կոոպերատիվի մասին: Կոոպերատիվի վարչությունը կանոնավոր է՞ վճարել իր մուրհակները, չէ՞ն բողոքարկվել, և յեթե այո, պատճառն ի՞նչ է և բողոքարկումները վերացված են, թե՞ չեն:

7. Կոոպերատիվի ապրանքների գները շուկայի գներից տարբերվում են, թե՞ վոչ: Ի՞նչպեսի վերադիր ծախսեր են արվում

և անդամներին տրվել է արդյոք վորև է արտոնություն՝ վոչ անդամների համեմատությամբ:

8. Կոոպերատիվի ծախած ապրանքները համապատասխան են յեղել սպառողների պահանջին, յեթե վոչ՝ ինչով է բացատրվում: Ապրանքային ճգնաժամեր զգացի՞լ է կոոպերատիվը, յեթե այո՝ պատճառն ի՞նչ է: Կոոպերատիվն ունի՞ արդյոք դժվար ծախվող ապրանքներ—ի՞նչպես են կուտակվել այդ ապրանքները և վարչությունն ի՞նչ է անելու այդ դժվար ծախվող ապրանքները:

9. Կոոպերատիվները հում է վարկ բաց թողել, ի՞նչ քանակությամբ և հում վորոշմամբ: Տրված վարկերը գանձվում են արդյոք:

10. Կոոպերատիվում յեղել են արդյոք գողություն ու չարահույսության այլ դեպքեր: Վարչությունն ի՞նչ միջոցներ է ձեռք առել հանցագործությունների դեմ: Ի՞նչ է անում վերստուգիչ հանձնաժողովը:

11. Կոոպերատիվն ի՞նչ ձեռնարկներ ու բաժանմունքներ ունի: Հարկավոր և ոգտավետ են նրանք: Հետագայում վարչությունն ինչ է անելու այդ ձեռնարկների կամ բաժանմունքների նկատմամբ:

12. Կոոպերատիվն ի՞նչ փոխհարաբերությունների մեջ է այլ կոոպերատիվ ընկերությունների, կուսակցական, կոմյերիտական, փոխ-ոգնություն, արհմիությունական և վարչական այլ կազմակերպությունների հետ:

13. Կոոպերատիվն ի՞նչ է արել սոցիալիստական կուտակման, միջոցների տնտեսման ու գների իջեցման խնդրում, կամ ինչ ծրագիր է կազմել այս հարցերի համար:

14. Կոոպերատիվը տարել է արդյոք կուլտ-կրթական աշխատանք և այդ գործի համար ի՞նչքան միջոցներ է ծախսել: Խրճիթ-ընթերցարանում կոոպերատիվ անկյուն պահելուն կամ բացելուն նպաստել է արդյոք: Ինչպիսի հաջողություն է ունեցել կոոպերատիվ գաղափարների ագիտացիայի ու պրոպագանդայի ապարիզում:

15. Կոոպերատիվ աշխատանքի համար արդյոք առաջ քաշվել են նոր աշխատավորների կանանցից, կոմյերիտականներից ու չքավորներից: Նման քայլերն ի՞նչ արդյունք են տվել:

16. Կոոպերատիվն ի՞նչ հեռանկարներ ունի և վարչությունն ի՞նչ մտադրություններով է աշխատելու: Կոոպերատիվի հետագա աշխատանքներում անդամներն ինչով կարող են աշակցություն գալ:

ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԱՆԵԼ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐՎԱ ԱՌԹԻՎ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆՈՒՄ ՅԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՄ

1. Տոնից մի քանի ուր առաջ գյուղացիների համար պետք է կազմակերպել զբոսայգիներ կոոպերացիայի մասին և նրանց մասն-
րամասն պետք է բացատրել, թե կոոպերացիան ինչ ոգնություն
և ցույց տալիս ազդատ ու միջակ գյուղացիներին:

2. Կոոպերատիվ անկյուն կազմակերպելու համար՝ անհրա-
ժեշտ է նախորոք գիմել տեղական կոոպերատիվներին և նրանցից
ստանալ նյութական վորոշ աջակցություն, համապատասխան լո-
գոնպներ, պլակատներ, նկարներ, գրքեր և այլն: Հատկապես
նյութեր և փեղեկություններ պետք է հավաքել տեղական կոո-
պերատիվների կյանքից ու գործունեությունից և յեթե հնարա-
վոր է՝ կոոպերատիվ անկյունում պետք է զետեղել այդ
նյութերին վերաբերող գիագրամներ, թվական տեղեկություն-
ներ անդամների, փայալճարների, շրջանառություն աճման մասին
և այլն:

3. Պատի լրագրի հատուկ համար պիտի լույս ընծայել՝ կո-
ոպերացիային նվիրած:

4. Կոոպերատիվ զբոսայգիների ընթացքում ևս կարելի է կա-
տարիլ անդամագրություններ և փայալճարների լրիվ գանձում: Այդ
նպատակով նման գեպքում նախապես պետք է ստեղծել վորոշ
հարմարություններ և համաձայնություն գալ կոոպերատիվ վար-
չություն հետ:

5. Պետք է ոգտագործել և բեմը, կոոպերատիվ ներկայա-
ցություն ու արտադանություններ կազմակերպելով:

Լ Ո Ջ ՈՒ Ն Գ Ն Ե Ր ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐՎԱ ԱՌԹԻՎ

ՀՈՒԼԻՍԻ 3-Ը ԿՈՈՊԵՐԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻ-
ՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՈՐՆ Ե.

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂՍՑԻԱԿԱՆ ՍԱՍՍԱՆԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԱՐԺՍԱՆ ԱՆԲԱԺԱՆ ՍՍԱՆ Ե.

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻՋՄ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐԶՆ Ե.

ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՍՄՐԱՑՆԵՆՔ ՔԱՂԱՔԻ ՅԵՎ
ԳՅՈՒՂԻ ՇԱՂԿԱՊԸ.

ԿՆՈՋ ՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐԶ ԲԱՑԵՔ ԴԵՊԻ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ.

ԿՈՍՅԵՐԻՏԱԿԱՆ, ՊԱՏՐՍՍՏՎԻՐ ՓՈԽՐԻՆԵԼՈՒ ԿՈՈՊԵ-
ՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ.

ՓԱՅԱՎՃԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵՆՔ 100 ՏՈԿՈՍՈՎ.

ՎԵՐՋ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԵՋ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՉԱՐԱՇԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.

ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՍՈՎ ԿԵԺԱՆԱՑՆԵՆՔ ԱՊՐԱՆՔ-
ՆԵՐԸ.

ԿՐՃԱՏԵՆՔ ԾԱԽՍԵՐԸ—ՃԿՈՒՆԱՑՆԵՆՔ ԱՊՊԱՐԱՏԸ—
ԱՄԵՆ ՄԻ ԿՈՊԵԿԸ ՏՆՏԵՍԵՆՔ.

ԱԿՏԻՎ ՓԱՅԱՏԵՐԸ ՍՏԵՂԾՈՒՄ Ե ՊԱՏԱՍԽԱՆՍՏՈՒ ՅԵՎ
ՏՆՏԵՍԱՎԱՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ.

ՄԵՐ ԱՎԵԼՈՐԴ ԴՐԱՄՆԵՐԸ ՊԱՆՆ ՏԱՆՔ ԿՈՊՊԵՐԱՏԻՎԻՆ՝ ՆՐԱ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

ԱՆԴԱՄԱԳՐՎԵՆՔ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻՆ ԱՄԲՈՂՋ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՎ.

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԻԱՅՆ ԿԱՐԵԼԻ Ե ՊԱՇՏՊԱՆԵԼ ՄԱՆՐ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՇԱՀԸ:

ԿՈՊՊԵՐԱՏԻՎ ԳԻՐՔ ՈՒ ԼՐԱԳԻՐ ԿԱՐԴԱԼՈՎ՝ ԱՎԵԼԻ ԳԻՏԱԿՑՈՐԵՆ ԿԸ ԿԱՊՎԵՆՔ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԵՏ.

ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ ՈԳՈՒՏԸ ՄԵՐ ՈԳՈՒՏՆ Ե—ՎՈՋ ՄԻ ԿՈՊԵԿ ՄԱՍՆԱՎՈՐ ՇՈՒԿԱՅԻՆ.

ԿԵՑՑԵ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՊՊԵՐԱՏԻՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ.

ԲՈՂՈՔ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՅԻ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՈՒ ՏԵՌՈՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԴԵՄ.

ԿՈՐԶԻ ԿՈՊՊԵՐԱՑԻԱՑԻ ՇԱՐՔԵՐԻՑ ՖԱՇԻԶՄԸ.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ԲԱՆԱԶԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

(Ընդունված Անդրկովկասյան կուսակցական լայն խորհրդակցության կողմից):

Լսելով Անդրկովկասյան կոոպերացիայի դրության վերաբերյալ զեկուցում, Անդրկովկասյան կուսակցական լայն խորհրդակցությունը նշում է հետևյալը. — Կոոպերացիայի աշխատանքի մեջ նկատվող վորոշ լավացումը ներկա տարում կապված է մասնավորապես նաև պետարդյունաբերությունում և կոոպերացիայի միջև նորմալ փոխհարաբերություններ հաստատելու հետ: Հիմնական պայմանագրերի գործնական կիրառումն իրեն արդարացրեց լրիվ ու ամբողջությամբ:

Մորհրդակցությունն անհրաժեշտ է գտնում առաջիկայում իրականացնել հետևյալը.

1. Կոոպերատիվ միություններն իրենց առևտրական քաղաքականություն մեջ պիտի ձգտեն պահեստային գործառքների հետագա կրճատմանն ու վերադիր ծախսերի իջեցնելուն: Պետարդյունաբերությունում ապրանքների ծրագրված վաճառքը կոոպերատիվ սխեմայի միությունների միջոցով այնպես պիտի կազմակերպվի, վորպեսզի դրա հետևանքով վերադիր ծախսերը չմեծանան ու շուկայի գները չբարձրանան:

2. Հատուկ ուշք պիտի դարձնել գյուղական սկզբնական ցանցի շրջանառություն մեծացմանը, վորը բանվորական կենտրոնական կոոպերատիվներից հետ է մնում: Գյուղական կոոպերացիայի մատակարարումը պիտի կատարել յուրաքանչյուր շրջանի գյուղական տնտեսությունից ավելցուկների իրացման (ոնալիզացիայի) ժամանակաշրջանին լրիվ համապատասխանությամբ:

3. Սպառկոոպերացիայի ամբողջ առևտրական աշխատանքը պիտի կատարել խիստ ծրագրված հիմունքներով: Անհրաժեշտ է հենց այժմից անցնել առաջիկա տնտեսական տարվա գործառնական ծրագիր կազմելուն: Առաջարկել Զակառյուզին հենց այժմից համապատասխան հրահանգներ ուղարկել տեղերին, Անդրկովկասյան սպառկոոպերացիայի ամբողջ սխեմայի առևտրական ծրագրեր կազմելու համար:

4. Ապրանքային սովի պայմաններում անհրաժեշտ է, վոր կոոպերացիան յուր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնի անդամ փայտերերին ծառայելու վրա՝ մատակարարելով նրանց այն ապրանքներն ու մթերքները, վորոնց պակասությունը շուկայում զգալի է:

5. Սպառնալիցաների անտեսական գործունեությունը ծավալի արագ մեծանալը, անկախ նրա սեփական ֆինանսների մեծանալուց, սպառնալիցաների համար առաջ է բերել ծանր ֆինանսական դրություն, վորը շարունակվում է մինչև այժմ:

1924—25 տնտեսական տարվա ընթացքում նկատելի չե գլխավորապես գյուղական սկզբնական կոոպերացիայի հաշվեկշիռների լավացում: Ինչ վերաբերում է միությունների ու խոշոր բանկոպներից մի մասի հաշվեկշիռներին, վերջիններիս մեջ նկատելի չե հակառակ յերևույթ, ըստ վորում, հատկապես սուր ֆինանսական լարում գրգռել են ազգային միությունները: Միությունների ու բանկոպների մեծ մասի ֆինանսական ծանր դրությունը խորացել է այն պատճառով, վոր այդ կազմակերպությունները ֆնանսով են աշխատել. մինչդեռ՝ սպառողական կոոպերացիայի գյուղական ցանցը մեծ մասով տարեհաշիվը փակել է ոգուտով:

6. Ինչպես միությունների, նույնպես և սկզբնական կոոպերատիվների հաշվեկշիռները մինչև այժմ ել ծանրաբեռնված են մեռած ու դժվար իրացվող աշխատանքներով (անհուսալի պարտապաններ, անշարժ ու շարժական կայք, ալցիաներ և այլն):

Այս տեսակետից շատ անբարենաջող է հատկապես վրացական կոոպերացիան:

Կոոպերացիան պիտի վճռական միջոցներ ձեռք առնի արագ կերպով իրացնելու յուր մեռյալ ու դժվար իրացվող արժեքները, պետք է արագացնի ապրանքաշրջանառությունը, ուժեղացնի փայլավճարային կամպանիան և վերջ տա այն արդյունաբերական ձեռնարկներին, վորոնք անմիջական կապ չունեն սպառողական մասսաների կարիքները բավարարելու հետ:

7. Սպառնալիցաների վերադիր ծախսերը շարունակում են նորմալ մոսկերելու ընթացքը: Կոոպերացիան պետք է վճռական կռիվ մղի վերադիր ծախսերի կրճատման ու հավելումների իջեցման համար:

8. Արձանագրելով գյուղատնտեսական կոոպերացիայի ընդհանուր զարգացումն Անդրկովկասյան Ս. Խ. Ֆ. Հանրապետության մեջ, առաջիկայում պիտի լուրջ ուշադրություն դարձնել կազմակերպչական աշխատանքները խորացնելու և գյուղատնտեսական կոոպերացիայի մասնագիտացման (սպեցիալիզացիա) վրա:

9. Գյուղատնտեսական կոոպերացիայի առանձին (ըստ

մասնագիտություն) միությունները, վորոնք գոյություն ունեն և առաջիկայում կարող են ծագել, կազմակերպչորեն մոտում են գյուղատնտեսական կոոպերացիայի հանրապետական կենտրոնների մեջ:

Նախ քան հատուկ գյուղատնտեսական կոոպերացիայի միություններն ըստ մասնագիտության կազմակերպելը, պիտի մանրամասն կերպով ուսումնասիրվի տնտեսական նպատակահարմարության խնդիրը, վորը պետք է ըզխի տվյալ վայրի գյուղատնտեսական սկզբնական կոոպերատիվի անհետաձգելի պահանջներից:

10. Գյուղատնտեսական վարկային կոոպերատիվների սկզբնական կոոպերատիվ ցանցը յուր մատակարարման ու արտադրական աշխատանքներով, այլ և կոոպերատիվ ղեկավարության կազմակերպմամբ մոտում է գյուղատնտեսական կոոպերացիայի սխտեմին մեջ:

Իսկ ֆինանսական-վարկային գործառքների մասով նրանք գտնվում են գյուղատնտեսական բանկերի անմիջական ղեկավարության ու հսկողության տակ:

11. Գյուղատնտեսական բանկերի կողմից գյուղատնտեսական կոոպերացիայի սխտեմին վաճառահանման ու արտադրական գործառքների համար վարկավորելը պիտի կատարվի բանկերի ու գյուղատնտեսական կոոպերացիայի փոխադարձ համաձայնությունով:

12. Գյուղատնտեսական բանկերը պիտի վերջ տան ամեն տեսակ առևտրո-միջնորդական գործառքներին:

13. Գյուղատնտեսական կոոպերատիվ կենտրոնները պիտի անցնեն ինքնավար հանրապետությունների ու շրջանների միությունների հետ սվելի ամուր, գործնական ու կազմակերպչական կապեր հաստատելուն:

14. Սահմանափակվում են գյուղատնտեսական ու սպառողական կոոպերատիվների ֆունկցիաները, արգելելով գյուղատնտեսական ու վարկային ընկերություններին սպառողական ապրանքներով առևտուր անելը, իսկ սպառողական կոոպերացիային արգելել, վոր գյուղատնտեսական միջերքների անմիջական պատրաստում ու վաճառահանում կատարի այնտեղ, վորտեղ աշխատում են սկզբնական գյուղատնտեսական կոոպերատիվներ, այլ և արգելել, վոր մատակարարի գյուղական տնտեսության արտադրության պահանջների առարկաներ:

15. Պետական միջնորդական կատարող մարմիններին պի-

տի պարտավորեցնել, վոր գյուղատնտեսական ապրանքների միջուկները կատարելիս, կամ գյուղատնտեսությունն անհրաժեշտ ինքնատար և այլ նյութեր մատակարարելիս, նրանք գերազանց յուր իրենց գյուղատնտեսական կոոպերատիվներին: Այս աշխատանքները պետք է անցկացնել միութենական միջոցով, խույս տալով աշխատանքի մեջ զուգահեռականություն ստեղծելուց:

16. Մեքենաների ոգտագործման ընկերությունները գյուղական չքավորությունը կոոպերատիվ սիստեմայի մեջ գրավելու գործում ցույց են տվել կենսունակություն:

Առաջարկել գյուղատնտեսական կոոպերատիվների միություններին, վոր իրենց ուշադրությունն ուժեղացնեն մեքենաների ոգտագործման ընկերությունների վերաբերմամբ, ամրացնելով նրանց տնտեսությունը, միաժամանակ ամեն կերպ աջակցել գյուղական տնտեսությունների կոլեկտիվ միությունների կազմակերպմանն ու տնտեսապես ամրանալուն, (կոլեկտիվ տնտեսություն, գյուղատնտեսական արտերևեր և այլն):

17. Անհրաժեշտ համարել, վոր գյուղատնտեսական կոոպերացիան յուր վրա առնի մեկիորդում ընկերություններ կազմակերպելու և նրանց աշխատանքը ղեկավարելու գործը:

18. Կոոպերացիայի հասարակական կազմակերպչական աշխատանքների հիմքում պիտի գծել կոոպերացիայի մասսաների ինքնագործունեությունը, կոոպերատիվ հասարակայնությունը զարգացումը և նոր աշխատավորական շերտերի՝ մանավանդ բանվորուհիների ու գեղջկուհիների՝ կոոպերացումը:

Այդ հիմնական խնդիրն իրականացնելու համար անհրաժեշտ է.

ա) Հաստատել կոոպերացիայի ղեկավար մարմինների կանոնավոր հաշվետվություն ընտրողների առաջ:

բ) Ինքնավար ու ազգային սպառողական և գյուղատնտեսական միությունների ղեկուցումները դնել ընդհանուր կամ պատգամավորական ժողովներում:

գ) Ուժեղացնել խանութային հանձնաժողովների աշխատանքն, այդ աշխատանքի մեջ գրավելով կոոպերատիվին անդամագրված կանանց մեծ մասը:

դ) Աշխուժացնել և ուժեղացնել վերստուգիչ հանձնաժողովների գործունեությունը, հաստատելով նրանց համար վարչություն անդամներին համահավասար պատասխանատվություն, վերստուգիչ հանձնաժողովների ղեկուցումները դնել ընտրողների առաջ:

յե) Խիստ կերպով հետևել, վոր կոոպերացիայի մեջ անցկացվեն դեմոկրատական սկզբունքներ՝ հատկապես ղեկավար ու վերահսկիչ մարմիններ ընտրելիս:

զ) Կոոպերատիվ ցանցի հրահանգչական աշխատանքն ուժեղացնել ու լավացնել:

19. Նշելով, վոր կոոպերացիան և վարկային ընկերությունները գյուղում բավականաչափ չեն համախմբել չքավոր մասսաներին և չեն բավարարում նրանց շահերը, — հանձնարարել Անդրկովկասյան կոոպերատիվ խորհրդի ֆրակցիային, վոր մեկ ու կես ամսվա ընթացքում միջոցներ մշակի այդ խնդրի գործնական իրականացման համար և ներկայացնի Անդրկովկասյան Ֆերկրային Կոմիտեին:

20. Անհրաժեշտ է ուժեղացնել կոոպերատիվ խնդիրների պարզաբանումն ընդհանուր և կուսակցական մամուլում, այլ և ուժեղացնել տեղական լեզուներով կոոպերատիվ գրականություն հրատարակելը:

21. Կոոպերացիայի ղեկավար աշխատանքների համար պետք է առաջ քաշել ավելի ընդունակ աշխատողներին, նկատի առնելով նաև նրանց գործնական ու տեխնիքական պատրաստականությունը: Կոոպերացիայի աշխատանքների աստիճանաբար մեծացող ծավալը պահանջում է աշխատողների բարձր վորակ, վորպիսի նպատակով անհրաժեշտ է պատշաճ բարձրության վրա դնել կոոպերատիվ կրթության գործը: Անդրկովկասյան Կոմունիստական Համալսարանի կոոպերատիվ կուրսերում ծանրության կենտրոնը պիտի տեղափոխել տեխնիքական առարկաների վրա՝ կապելով նրանց կոոպերացիայի գործնական աշխատանքների հետ:

Միաժամանակ շարունակել կոոպերացիայում ներկայումս աշխատողների հասարակական և քաղաքական վերապատրաստման գործը՝ նպատակ ունենալով նրանց վորակի բարձրացումը:

Անհրաժեշտ է խորացնել ու լայնացնել կոոպերատիվ առարկաների (գիսցիպլինների) դասավանդությունը՝ բարձրագույն դպրոցներում:

22. Կոոպերացիայում վատնումներն ու չարաշահությունները վերջին տարում ընդունել են շատ լայն չափեր: Այդ բանից տուժում է, մանավանդ գյուղական կոոպերացիայի սկզբնական ցանցը, վորի մեջ 1924—25 թ. կատարված վատնումներն ու չարաշահությունները կազմում են շատ զգալի գումար:

Վատնումների ու չարաշահությունների դեմ կռիվը պիտի

տարվի ուժեղ թափով: Ծանրության կենտրոնը պետք է փոխադրել դեպի կոպերատիվ հասարակայնության³ զարգացումը և վերստուգել ու խանութային հանձնաժողովների կողմից հասարակական հսկողությունն ուժեղացնելը:

Միաժամանակ պիտի շարունակել վատնումների ու չարաշուկությունների մեջ մեղադրվողներին դատական պատասխանատվության յենթարկել: Հատուկ ուշք պիտի դարձնել կոպերատիվների գործը դնելու և կանոնավոր ու ժամանակին տարվող հաշվապահությունն ունենալու վրա:

23. Կուսակցական ու խորհրդային կարգով խիստ պատասխանատվություն պետք է հաստատել ամեն տեսակ անտնտեսավարությունների ու անփութությունների համար: Յուրաքանչյուր կոպերատիվ բլիշ քննություն պետք է յենթարկվի և անտնտեսավարության ու անփութության դեպքում մեղավորներն անմիջապես պետք է պատասխանատվության կանչվեն: Միաժամանակ պետք է կուսակցական ու կոպերատիվ գծով մամուլում հատուկ կամպանիա տանել՝ կոպերացիայում գոյություն ունեցող անտնտեսավարության, չարաշուկությունների ու վատնումների դեմ:

24. Յերկրի և մասնավորապես կոպերացիայի ընդհանուր տնտեսական դրությունը կոպերացիայի առաջ ամբողջ սրությունով դնում են տնտեսական ռեժիմի կիրառման խնդիրները: Այդ նպատակով անհրաժեշտ է ուշք դարձնել հետևյալ միջոցների կիրառման վրա:

ա) Վերաքննել անձնական կազմերի վրա կատարվող ծախսերը՝ կրճատելու համար կոպերատիվների հաստիքները (շտատները): Միաժամանակ ընտրովի մարմիններում վարձով աշխատողների կազմը պետք է խստորեն համապատասխանի ամեն մի կազմակերպության աշխատանքի ծավալին: Սկզբնական բոլոր կոպերատիվներում, ի բաց առյալ կենտրոնական բանկոպները, վորպես կանոն, պետք է ընդունել վարչության մի վճարովի անդամ ունենալը:

բ) Արտաժամյա աշխատանքները կրճատել, թույլ տալով այն ամենաձայրահեղ անհրաժեշտությունների դեպքում:

գ) Կրճատել գործուղվումների ու ճանապարհորդությունների ծախսերը, բոլորովին արգելելով միջազգային վագոններով ճանապարհորդելը: Գործուղվումները վճարել որեւէ թույլատրված միջոցով սահմաններում, խույս տալով ծառայողների այնպիսի տեղափոխություններից, վորոնք կապված են տեղափոխության հատուկ ծախսերի (подъемные) հետ:

դ) Ամենամեծ չափերով կրճատել տարեհաշիվների, գեկուցումների, սղագրական հաշվետվությունների, վիճակագրական ու այլ նյութերի տպագրության ծախսերը:

յե) Վերաքննել վիճակագրական աշխատանքների ծավալը: Բոլորովին հրաժարվել բարդ տեղեկատվական նյութերից, անկատանքներից և այլ աշխատանքներից, վորոնք մեծ ծախսեր են պահանջում և չեն բխում տվյալ կազմակերպության տնտեսական պահանջներից:

զ) Միջոցների հապսակ դանազան հայտարարությունների ու այլ ռեկլամների համար արվող ծախսերը:

ե) Բոլորովին վերջ տալ բարեգործական նպատակներով արվող հատկացումներին, այլ և կոպերացիայի աշխատանքի հետ կապ չունեցող այլ ծախսերին:

ը) Վերջ տալ անձնական կանխույթներ (ավանսներ) տալուն և խիստ հսկողություն սահմանել առհաշիվ գումարները ժամանակին հանդիսանալու վրա:

թ) Կրճատել թեթև գումակային (легкий транспорт) ծախսերը: Կոպերատիվների շինքերի սարքավորման ժամանակ խիստ խնայողություն պահպանել:

ժ) Կրճատել հեռագրական, գրասենյակային ու տնտեսական ծախսերը:

25. Խորհրդակցությունն արձանագրում է, վոր ներկայումս գոյություն ունեցող բանկային տոկոսները կոպերացիայի անգեֆիցիտ (անվնաս) աշխատանքի հնարավորությունը պակասեցնում են, մասնավոր գյուղատնտեսական կոպերացիային, ուստի խորհրդակցությունն անհրաժեշտ է գտնում բանկային տոկոսների իջեցումը: Վարկավորող հիմնարկներին արգելել վարկավորվող հիմնարկների ոգուտներին մասնակցելը, այլ և տոկոսային դրույքների ծածուկ բարձրացումը:

Դրան դուգահեռ, պետք է վերաքննել գյուղատնտեսական կոպերացիայի վարկավորման պայմանները, նպատակ դնելով յերկարացնել վարկավորման ժամկետները և համաձայնեցնել այդ վարկավորումը գյուղատնտեսական ապրանքների շրջանառության ժամկետի հետ:

26. Անդրժողովուրդի գեկրետը՝ սոցիալական ապահովության տոկոսների իջեցման վերաբերմամբ, տարածել նաև կոպերացիայի բոլոր տեսակների վրա:

27. Կոպերատիվ կազմակերպությունների աշխատանքների գեկավարությունը կուսակցական կոմիտեները պետք է տանեն

կոոպերատիվների վարչությունների ու կոոպերատիվ խորհուրդների ֆրակցիաների միջոցով: Կուսակցական կոմիտեների համար պարբերաբար պետք է դնել կոոպերատիվների վարչությունների ֆրակցիաների հաշվետու ղեկուցումները:

28. Արձանագրելով կոոպերացիայի աշխատանքների վրա կուսակցական կոմիտեների կողմից մի քանի տեղերում նկատված մանր հովանավորություն գոյությունը (мелочная опека), խորհրդակցությունն անհրաժեշտ է գտնում, վոր կուսակցական կոմիտեները՝ ղեկավարելով կոոպերացիայի ընդհանուր գիծը, զբաղվեն սկզբունքային խնդիրների լուծումով, ղեկավար որդանների անձնական կազմ ընտրելով և այլն, բոլորովին չխառնվելով կոոպերացիայի առօրյա աշխատանքների մեջ:

29. Կուսկոմները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն կոոպերատիվ աշխատանքի համար կուսակցական-տնտեսավարներ առաջ քաշելու վրա: Անթույլատրելի պետք է համարել կոոպերացիայում աշխատող պատասխանատու կուսակցականների հաճախակի տեղափոխությունները, կամ հետ կանչելը (снятие) իրենց հիմնական աշխատանքից:

30. Բոլորովին անթույլատրելի պետք է համարել սկզբնական կոոպերատիվների բարեկամական մուրհակներ տալը իրենց կենտրոններին՝ վերջինների պարտքերի հանդեպման համար:

**ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԸ
ԱՄԵՆ ՄԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԵՐ ՀԱԶՈՂՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ ՊԵՏՔ Ե ԿԱ-
ՏԱՐԻ ՅԵՎ ԻՐԵՆ ՀԱՇԻՎ ՊԻՏԻ ՏԱ ՄԵՐ
ԱՌԱՋ ԴՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ:**

ՀՀ Ազգային գրադարան



NL0193246

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

ԱՄԵ

ԹՅՈՒ

ՏԱՐԻ

ԱՌԱ